Դպրոցական ճաշարան

Նպատակ:

Վայոց ձորի 10 դպրոցները կահավորել որակյալ ճաշարանային կահույքով, խոհանոցային պարագաներով և սպասքով, որոնք անհրաժեշտ են երեխաներին սննդարար, տաք ճաշ մատուցելու համար:

Ծրագրի նկարագրություն

Սկսած 2014թ.-ից ՀՀ կառավարության հետ համատեղ ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագիրն իրականացնում է «Հայաստանում դպրոցական սննդի ծրագիրը»: Նախագիծն ուղղված է ՀՀ մարզերում դպրոցականների համար հավասարակշռված, առողջ սննդի ապահովմանը, ինչպես նաև հասանելի և կայուն դպրոցական սննդի Ազգային ծրագրի ստեղծմանը: Ծրագրի նպատակն է եղել ապահովել, որ երեխաները դպրոցում ամեն օր առնվազն մեկ անգամ տաք եւ սննդարար կերակուր ստանան: Այս տարիների ընթացքում վերանորոգվել են Հայաստանի տարբեր մարզային դպրոցների ճաշարաններ: Առաջիններից ծրագրին միացած Վայոց Ձորում տասնյակ դպրոցներ 2020 թթ. հնարավորություն ունեցան մարզպետարանների և ՄԱԿ ՊՀԾ աջակցությամբ վերանորոգել ճաշարաններն ու խոհանոցային տարածքները, ինչպես նաև զինվել հիմնական խոհանոցային սարքավորումներով: Այս պահին բոլոր դպրոցները գրեթե պատրաստ են տաք եւ առողջարար կերակուր մատուցել իրենց աշակերտներին, բայց կա մեկ խնդիր. նրանք դեռ պետք է ձեռք բերեն ճաշարանի կահույք եւ խոհանոցային պարագաներ և սպասք: Այդ իսկ պատճառով երեխաներին այժմ մատուցվում է չոր սնունդ՝ հիմնականում քաղցրավենիք: Ձեր օգնությամբ մենք պատրաստվում ենք կահավորել այս դպրոցական ճաշարաններից 10-ը, որպեսզի նրանք կարողանան առողջ սնունդ մատուցել թվով 462 երեխաներին: Մենք ֆինանսավորելու ենք դպրոցները հերթով. Պատրա՞ստ եք սեղան գցել մեզ հետ միասին:

Բյուջե

Ինչ	Երեխա	Ընդամենը ՀՀ դրամ
Ազատեկ	38	776,900
Վերնաշեն	43	883,400
Թառաթումբ	18	584,200
Աղնջաձոր	12	466,100
Ձերմուկ	84	381,000
Շատին	89	580,500
Արտավան	10	442,100

Ընդհանուր

Փոխարժեք 1 ԱՄՆ դոլար = 482.55 ՀՀ դրամ

₾4,114,200